ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀԿ-ՆԵՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հասարակական կազմակերպությունների, քաղհասարակության հարգելի ներկայացուցիչներ, շնորհավորում եմ բոլորիդ՝ հասարակական կազմակերպությունների միջազգային օրվա կապակցությամբ:

Անուրանալի է ձեր դերն ու առաքելությունը հասարակության զարգացման և կայունացման, հասարակական և անհատական շահերի պաշտպանության գործում:

Փամբակ համայնքը բարձր է գնահատում բնակչության շրջանում ծավալած ձեր կամավոր գործունեությունը, որի վառ ապացույցն է Փամբակի համայնքապետարանի և ձեր սերտ համագործակցությունը:

Շնորհակալություն եմ հայտնում համայնքի տարածքում ձեր մատուցած ծառայությունների, մեծ նվիրումի և աջակցության համար, քանի որ համայնքը զորավոր դառնում է միայն պետական և հասարակական կառույցների, սրտացավ անհատների համագործակցության արդյունքում:

Մաղթում եմ ձեզ նոր գաղափարներ և դրանք կյանքի կոչելու հսկայական ներուժ:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան